

Թ. 00. 01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Դավիթ Գագիկի Աքեյանի «Ֆալիբիլիզմը գիտության փիլիսոփայության արդի հիմնախնդիրների համատեքստում» թեմայով ատենախոսության վերաբերյալ կարծիք.

Ատենախոսությունը կազմված է ներածությունից և չորսական ենթագլուխ պարունակող երկու գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության բովանդակությունն արտացոլված է սեղմագրում:

Ատենախոսության առաջին գլխի՝ «Ֆալիբիլիզմի զարգացումը փիլիսոփայական ավանդույթներում», առաջին երեք ենթագլուխները նվիրված են ֆալիբիլիզմի պատմությանը: Չորրորդ ենթագլխը վերնագրված է «Ֆալիբիլիզմը գիտության զարգացման հայեցակարգերի համատեքստում. հայեցակարգային վերլուծություն»: Այստեղ ատենախոսը մի կողմից ամփոփվում են առաջին երեք ենթագլուխների արդյունքները, իսկ մյուս կողմից հիմնավորում երկրորդ ենթագլխի հարցադրումներին անդրադարձը:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Ֆալիբիլիզմը գիտության զարգացման արդի հիմնահարցերում», վերաբերում է ճշմարտության, օբյեկտիվության, գիտության նպատակի, գիտելիքի հիմնավորման, գիտական առաջընթացի վերաբերյալ մի շարք խնդիրներին տրված ֆալիբիլիստական պատասխանների: Ատենախոսը երկրորդ գլուխն ամփոփում է «Ֆալիբիլիզմը արտախմացաբանական ոլորտներում» վերնագրով ենթագլխով:

Ատենախոսությունն ունի բազմաթիվ դրական կողմեր: Ատենախոսին հաջողվել է ուսումնասիրել իմացաբանության և գիտության վերաբերյալ բազմաթիվ գիտական աշխատություններ և դրանցում առաջ քաշված գաղափարները վերլուծելով ի մի բերել՝ վեր հանելով ֆալիբիլիզմի պատմական զարգացման մի շարք կարևոր հանգրվաններ, 20-րդ դարում մշակված ֆալիբիլիստական հիմնական տեսությունների հիմնադրույթները, ինչպես նաև գիտության զարգացման տեսությունների և ֆալիբիլիզմի հարաբերության մի շարք կարևոր հարցեր:

Ատենախոսության մեջ քննարկվում են գիտության փիլիսոփայության վերաբերյալ մի շարք հարցեր, որոնք կամ վերջին տասնամյակներում Հայաստանում գործող փիլիսոփաների կողմից առհասարակ չեն ուսումնասիրվել, կամ էլ ուսումնասիրվել են լոկ մեկերեսորեն:

Ատենախոսը «ֆալիբիլիզմ» տերմինը կիրառում է իմացաբանական այն տեսության համար, ըստ որի գիտելիքը կարող է լինել սխալական, ոչ հավաստի: Ատենախոսը պնդում է, որ ա) գիտելիքի ինֆալիբիլիստական ըմբռնումը, ըստ որի գիտելիք կարող է լինել միայն անսխալական, հավաստի և ճշմարիտ համոզմունքը, պատմականորեն եղել է գերիշխող, բայց բ) բազմաթիվ տեսաբաններ գիտակցել են, որ մեր համոզմունքների գերակշիռ մասը կամ բոլոր համոզմունքները սխալական են: Այս երկու հանգամանքը, ըստ ատենախոսի, շատ մտածողների հանգեցրել է կամ սկեպտիցիզմի (Քանի որ գիտելիքը պահանջում է հավաստիություն, որն անմատչելի է,

գիտելիք չունենք/չենք կարող ունենալ), կամ էլ դոգմատիզմի (Գիտելիքը պահանջում է հավաստիություն, և մենք ունենք որոշ հավաստի, վերանայման ոչ ենթակա համոզմունքներ): Ֆալիբիլիզմն, ըստ ատենախոսի, գերադասելի է և սկեպտիցիզմից և դոգմատիզմից, քանի որ խուսափում է հետևյալ երկու ոչ արժանահավատ դրույթներից. ա/ չունեն գիտելիք, բ/ տվյալ էմպիրիկ դատողությունը կամ տվյալ ապրիորի սկզբունքը հավաստի է և ենթակա չէ որևէ վերանայման (ինչպես հայտնի է, դժվար է գտնել այնպիսի դրույթ, որի հավաստիությունն ընդունեն բոլորը):

Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակը փորձում է ցույց տալ, որ ա/ Ֆալիբիլիզմը ոչ միայն շրջանցում է այս դժվարությունները, այլ նաև չի պահանջում ընդունել, որ գիտության նպատակը ճշմարտությունը չէ, բ/ գիտելիքը կարող է լինել հիմնավոր (ինչպես նաև ավելի կամ պակաս հիմնավոր) երբեք չլինելով հավաստի, գ/ գիտելիքի, մասնավորապես գիտական գիտելիքի ֆալիբիլիստական ըմբռնումը գիտության առաջընթացի՝ գիտական մի տեսությունը մյուսով փոխարինվելու ընդունելի տեսության հիմքեր է տրամադրում: դ/ Ֆալիբիլիզմը սկզբունքը կարող է ընդլայնվել և կիրառվել ոչ միայն գիտելիքի այլ նաև արժեքների, անհատական և սոցիալական վարքի ձևերի և սկզբունքների նկատմամբ:

Ատենախոսությունը, ինչպես քիչ առաջ նշեցինք, ունի բազմաթիվ դրական կողմեր: Սակայն թույլ տվեք այստեղ ներկայացնել որոշ առաջարկություններ և դիտողություններ:

1. Մեր կարծիքով ատենախոսությունը կշահեր, եթե ատենախոսը որդեգրեր ամբողջովին արտապատմական մոտեցում փոխանակ նախ պատմական (Գլուխ 1) իսկ ապա արտապատմական (Գլուխ 2) մոտեցում որդեգրելը:

Ինչո՞վ կարող էր նպաստավոր լինել ատենախոսության հիմնական գաղափարների ոչ պատմական շարադրանքը: Նախ, «Հետազոտության նպատակն ու խնդիրները» բաժնի (էջ 7) ինչպես նաև «Եզրակացության» (էջ 171) ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ատենախոսի ուշադրության կենտրոնում են եղել գիտության զարգացման, գիտելիքի հիմնավորման, գիտական առաջընթացի վերաբերյալ տեսությունների ինչպես նաև արտաիմացաբանական ոլորտներում ֆալսիֆիկացիայի սկզբունքի բարած տեսական առավելություններն ու կիրառությունները: Այս խնդիրների լուծումը չի պահանջում պատմական մոտեցում:

Երկրորդ, պարզ չէ, թե օրինակ, §1.1 «Ֆալիբիլիզմի ակունքներն ու զարգացումն անտիկ հունական և նոր շրջանի փիլիսոփայություններում» (էջ 15) ենթագլխում քննարկված գաղափարներն ինչպես և որքանով են օգնում այս խնդիրների լուծմանը:

2. Ատենախոսության մեջ կան մի շարք սխալներ: Բոլոր այդպիսի սխալների թվարկումն ու քննարկումը սույն գրախոսությունն անհարկի ծավալուն կդարձներ: Ներկայացնենք միայն մեկը: Նշեցինք, որ ատենախոսը քննարկում է որոշ հարցեր, որոնք հայալեզու փիլիսոփայության շրջանակներում քիչ են ուսումնասիրվել կամ առհասարակ չեն ուսումնասիրվել: Դրանցից է, օրինակ, Դեյվիդ Լուիսի իմացաբանական կոնտեքստուալիզմը, որի օգնությամբ ատենախոսը փորձում է ցույց տալ, որ հնարավոր

է գիտելիքի ոչ հակասական ֆալսիֆիլիստական հիմնավորում: Լուիսն իր կոնտեքստուալիզմով պատասխանում է գիտելիքի, որպես ճշմարիտ, հիմնավոր համոզմունքի ըմբռնման դեմ էդմունդ Գեթիերի հայտնի առարկությանը՝ հնարավոր է այնպիսի համոզմունք, որը լինի ճշմարիտ, հիմնավոր բայց չլինի գիտելիք: Ինչպես հայտնի է, Գեթիերի առաջ քաշած խնդրի շուրջ քննարկումների կիզակետում համոզմունքների իմացաբանական հիմնավորումն է: Ինֆալսիֆիլիստները ձգտում են ցույց տալ, որ անձը գիտի, որ P, եթե և միայն եթե նա ամուր հիմքեր ունի բոլոր P' տարբերակները բացառելու համար: Սակայն, բոլոր P' բացառելը, ինչպես հայտնի է, գործնականում անհնար է: Կոնտեքստուալիստներն այս խնդիրը լուծում են պնդելով, որ սուբյեկտը պետք է բացառի միայն տվյալ իրավիճակի համար կարևոր, տվյալ հարցին վերաբերող և այլն P' տարբերակները: Ատենախոսը ճիշտ է ներկայացնում Լուիսի կենտեքստուալիզմը, սակայն դրանից անմիջապես հետո պնդում է, որ կոնտեքստուալիստներ էին նաև Չարլզ Պիրսն ու Կարլ Պոպերը (էջ 111): Այս հեղինակները եզրույթի ժամանակակից առումով, այն առումով որով կոնտեքստուալիստ էր նաև Դեյվիդ Լուիսը, կոնտեքստուալիստներ չեն:

3. Ատենախոսությունը կշահեր, եթե նրանում ավելի հետևողականորեն կիրառվեին մի շարք առանցքային եզրույթներ: Եզրույթների անհետևողականության մեկ օրինակ ներկայացնենք.

Որոշ դրվագներում ատենախոսն «իմացությունն» օգտագործում է որպես «գիտելիքի» հոմանիշ: Ահա այդպիսի մի քանի դրվագ.

- «Պլատոնը (մ.թ.ա. 428–347 թթ.) հավաստի և բացարձակ իմացությունը փնտրում էր գաղափարական աշխարհում» (էջ 18),
- «համոզմունքները մտքի կամ տպավորությունների արդյունք են, որոնցից շատերն ինքնին բավականաչափ համոզիչ են ճշմարիտ համարվելու և որպես իմացություն դիտարկվելու համար» (էջ 20) և այլն:

Բայց այլ դրվագներում «իմացությունը» կիրառվում է որպես «ներաշխարհի» կամ «գիտակցության» հոմանիշ: Օրինակ.

- «Պիրսը համոզված է, որ որևէ անկասկածելի բան չի մնա Դեկարտի քննադատական մեթոդը կիրառելուց հետո: Եթե մենք փորձենք իմացությունը մաքրել կասկածելի համոզմունքներից, ապա մենք ստիպված կլինենք հրաժարվել մեր բոլոր համոզմունքներից» (էջ 43):
- «Կարևոր է արձանագրել, որ **ինֆալսիֆիլիստները չեն պահանջում բոլոր համոզմունքների և գիտելիքների անսխալականությունը**, այլ պնդում են, որ ողջ իմացությունում միայն որոշ գիտելիքներ անսխալական են, ինչպես օրինակ, մաթեմատիկական-տրամաբանական աքսիոմները կամ անկասկածելի ինտուիտիվ ճշմարտությունները Դեկարտի իմացաբանությունում» (էջ 70):

Իսկ մեկ այլ տեղ ատենախոսը իմացությունը սահմանում է բոլորովին այլ կերպ.

- «*Իմացությունը* կարող ենք սահմանել որպես մարդկային ճանաչողության գործընթացի անմիջական կամ միջնորդավորված (այդ թվում նաև ենթադրելի) արդյունքների ամբողջություն անկախ ճանաչողության արդյունքների (օր.՝

